Գործ ԵԴ/3708/02/23

ՈՐՈՇՈՒՄ

հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

13.02.2023թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր՝ Էդ. Ամալյանս ծանոթանալով՝ «Ռեգիոնստրոյսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից ներկայացված հայցադիմումին ընդդեմ պատասխանող՝ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքների»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2023թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու, «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված «ֆինանսական» ծրարում կցագրված ֆայլի ընթերցման անհնարինությունա պայմաններում ընդունել և հաշվի առնել «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի էլ. փոստով և /կամ էլ. կրիչով ներակյացված գնային առաջարկը պարտավորեցնելու պահանջների մասին.

ՊԱՐԶԵՑԻ

Հայցվորի անունից 30.01.2023թ.-ին հայց է ներկայացվել Երևան քաղաքի առջային ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան):

Հայցադիմումը 30.01.2023թ.-ին մակագրվել է դատավոր Էդ. Ամալյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 31.01.2023թ.-ին:

Դատարանի 02.02.2023թ.-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է հայցվորին:

Հայցվորը 06.02.2023թ. դատարան է ներկայացրել պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագրի բնօրինակը և վերացնելով հայցադիմումի թերությունները 07.02.2023թ-ին հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան:

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ սույն գործով պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդածի 1.1 կետի պահանջները:

Հայցադիմումը 17.08.2022թ-ին մակագրվել է դատավոր Էդ. Ամալյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 18.08.2022թ-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասին համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը

տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 10-12-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-125-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 'Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածների 27.2-րդ գլխի իրավական կարգավորումների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները ՝ այն է սույն գործով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Հայցադիմումը համարվում է դատարան ներկայացված 30.01.2023թ-ին:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Էդ. Ամալյան**